Հայաստանի աշխարհագրական վայրերի անվանումներով, ինչպես նաև նշանավոր հայերի անուններով փողոցներ կան Ֆ-ի շատ քաղաքներում՝ Ալֆորվիլում (Միսաք Մանուշյանի խմբի, Կոմիտասի), Բանյոյում (Հայկ Դպիրյանի), Լիոնում (Հայաստան), Վալանսում (Երևան), Դեսինում (Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի), Կլամարում՝ հրապարակ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին ևն: Բույրացած քաղաքներ են Բանյոն և Վանաձորը, Ավինյոնը և Երևանը, Դեսինը և Ստեփանավանը, Վիլլեորբանը, Ռեքսը, Դեսինը և Աբովյանը, Իսի լե Մուլիհոն և Էջմիածինը, Ալֆորվիլը և Աշտարակը, Վիենը և Գորիսը, Վալանսը և Իջևանը, Ռոմանը և Վարդենիսը:


Ֆ-ում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին հուշարձաններ են կառուցվել Փարիզի շրջակայքում՝ Ալֆորվիլ (1984), Իսի լե Մուլիհոն (1982, հեղինակ Դ. Երևանցի), Առնուվիլ լե Գոնես (1975, հեղինակ՝ Վ. Կարապետյան), Շարանտոն լե Պոն (1996, հեղինակ՝ Ռ. Եսայան), Լիոնում (1978, հեղինակ՝ Թադևոսյան) և շրջակայքում՝ Շարվիե և Պոնտ դը Շերյի (1998), Դեսին (1972, հեղինակ՝ Դառնաս), Վիեն (1982,

հեղինակ Դառնաս), Վիեն (1982, հեղինակ Թորոս), Վալանս (1987, հեղինակ Թորոս), Մարսելում (1973, հեղինակներ՝ Թորոս և Փիրյան) և շրջակայքում էքս-ան-Պրովանս (1983, հեղինակ Թորոս), Սոմպեյե (1986, հեղինակ է Սարգսյան), Ավինյոնում (1988, հեղինակ Բոլլ), Տրակինյանում (1995, հեղինակ Թորոս): Խաչքար-հշուշակոթող կա Թուլուզում (1993, հեղինակ՝ Ս. Դանիելյան):

2003-ի ապրիլի 24-ին Փարիզի կենտրոնում (Կանադա հրապարակի մի ծառուղում) տեղադրվել է Կոմիտասի 4-մետրանոց բրոնզե արձանը՝ «Երգահան Կոմիտասի և 1915-ին Օսմանյան կայսրությունում իրականացված 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ 1,5 մլն հայերի հիշատակին» մակագրությամբ (հեղինակ՝ Դ. Երևանցի):

1988-ի Սպիտակի երկրաշարժից տուժած հայրենակիցներին օգնելու նպատակով ֆրանսահայ համայնքում ստեղծվել են «Ազնավուրը՝ Հայաստանին», «SOS Արմենի» (1988 - 1994), «Հույս Հայաստանին» (հիմնվել է Ֆ-ի հայ ավետարանական եկեղեցիների նախածեռնությամբ) կազմակերպությունները, որոնք «մշակել և աղետի գոտում իրականացնում են նաև երկարաժամկետ օգնության

Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշարձան Մարսելի Ս. Սահակ - Ս.Մեսրոպ Սրբոց բարձրանշաց եկեղեցու բակում



ծրագրեր:

1998-ի մայիսի 29-ին Ֆ-ի խորրդարանը ճանաչել է 1915-ի Հայոց ցեղասպանության փաստը: 2001-ին Ֆ. ճանաչել է Հայոց ցեղասպանության երկրի Սենատի ընդունած օրենքի տեսքով:

Փարիզում

հայերը (հիմնականում վաճառականներ) բնակություն են հաստատել XV դ.:

Մինչև XVIII դ. վերջը հայերը փոքրաթիվ էին և կազմակերպված համայնք չունեին: Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում կազմակերպվել է հայագիտության ամբիոն: 1846-ից Սևրում սկսել է զործել Սամուել-Մուրատ վարժարանը: XIX դ. 40-ական թթ. Փարիզ է ձգտել ուսումնաստեմչ հայ երիտասարդությունը (հիմնականում հետևել են բժշկությունը), 1843-1914-ին կրթություն է ստացել 122 հայ երիտասարդ), որն ամմասն չի մնացել մայրաքաղաքի հասարակական-քաղաքական կյանքից: 1849-ին Փարիզում հիմնվել է «Արարատյան ընկերությունը» (Նահապետ Ռուսինյան, Հովսեփ, Շիշմանյան (Շերեմց) և ուրիշներ), որը քարոզել է հայ ժողովրդի ազգային-ազատագրության գաղափարը: 1855-ին հրատարակվել են Ֆ-ում առաջին հայերեն պարբերականները՝ «Արևելք», «Մասյաց աղավնի»: 1855 - 59 - ին Փարիզի Գոնել արվարձանում զործել է Հայկազյան վարժարանը: XIX դ. 60 - ական թթ. փարիզահայերը հիմնել են «Ս. Էջմիածին» մատուռը: Հայ բնակչության հոգևոր հովիվ է նշանակվել Կարապետ վրդ. Շահնագարյանը:

XIX դ. վերջից Փարիզում ստեղծվել են հայ հասարակական կազմակերպություններ՝ Հայկազյան ուսումնասիրաց ընկերությունը (1879), Հայ ուսանողական միությունը (1888), Աշխատավորական միությունը (1904), Ֆրան-

սահայ տիկնանց միությունը (1913) և ուրիշներ, որոնք կազմակերպել



Կոմիտասի արձանի բացման արարողությունը Փարիզում


են համայնքի ազգային կյանքը: 1902-ին Փարիզի ժան Գուժոն փողոցում կառուցվել է Ֆ-ում առաջին հայկական եկեղեցին՝ Ս. Հովհաննես Մկրտիչ մայր եկեղեցին:

Փարիզի հայ համայնքն առավել աշխուժացել է 1920-ական թթ. կեսից, երբ Մեծ եղեռնից փրկված արևմտահայ զաղթականների մի մասը, հասնելով Մարսել, տարածվել է երկրով մեկ, բնակություն հաստատել նաև Փարիզում և նրա շրջակայքում: Գաղթածների մեծ մասը բանվորներ էին, արհեստավորներ, կային մտավորականներ: Փարիզում հայերի թվի աճին զուգընթաց (1914- ին շուրջ 2,5 հզ., 1925-ին՝ 25-30 հզ.) ավելացել են նաև հասարակական, կրթական կազմակերպությունները՝ Հայ բժշկական միությունը (1920), Հայ նախկին ուսանողների միությունը (1922), Ֆրանսահայ գրողների ընկերակցությունը (1923), Հայ չափահաս երկսեռ որբերի միությունը (1925), ՀՕԿ-ի մասնաճյուղը (1925), Նուպարյան մատենադարանը (1929), Մարի Նուպար ուսանողական տունը: 1926-ին կազմակերպվել է հայ արվեստագետների «Անի» խմբակցությունը: 1928-ից Փարիզում են հաստատվել Դպրոցասեր տիկնանց ընկերությունը (գործել է մինչև 1937-ը) և Դպրոցասեր տիկնանց վարժարանը: 1930-ին քաղաքի Լատինական թաղամասի կենտրոնում Հ. Սամուելյանի նախածեռնությամբ բացվել է

«Արևելյան գրախանութ» (գործում է ցայսօր):

Փարիզը դարձել է հայ մշակույթի կենտրոններից: Երկար տարիներ այստեղ են ապրել և ստեղծագործել նկարիչ Է. Շահինը, կոմպոզիտոր, երաժիշտ-բանահավաք, երգիչ Կոմիտասը, գրողներ Ա. Չոպանյանը, Ա. Իսահակյանը, Ա. Շիրվանզադեն, նկարիչ - քանդակագործ Ե. Քոչարը, գեղանկարիչ Մ. Սարյանը:

Յետպատերազմյան տարիներին Փարիզում իրենց գործունեություն են աշխուժացրել հասարակական, մշակութային և այլ կազմակերպություններ, շարունակել են լույս տեսնել պարբերականներ: Սովորաբար է փարիզահայ համայնքը (ի հաշիվ Մերձավոր Արևելքի երկրներից գաղթածների): 1980-ական թթ. Փարիզում և շրջակա քաղաքներում (Ալֆորվիլ, Բանյո, Կլամար, Շավիլ, Իսի լե Մուլինո, Բուա Կոլոմբ, Աոնուվիլ լե Գոնես, Վերսալ ևն) բնակվել է շուրջ 80 հզ. հայ: Յետագա տարիներին համայնքի սովորաբար միտումը շարունակվել է նաև Հայաստանից գաղթածների հաշվին: Ներկայումս (2003) Փարիզում և արվարձաններում հայերի թիվը շուրջ 100 հզ. է: Ջգալի թիվ են կազմում բանվորները, արհեստավորները, առևտրականները,




Փարիզի Ս.Նովիաննես Մկրտիչ եկեղեցին

պետական ծառայողները, արվեստագետներն ու մտավորականները: Գործում են Մ. Պողոս - Պետրոս (Ալֆորվիլ), Վարագա Ս. Խաչ (Աոնուվիլ լե Գոնես), Ս. Գրիգոր Լուսավորիչ (Շավիլ), Ա. Մարիամ Աստվածածին (Իսի լե Մուլինո) եկեղեցիները, Դպրոցասեր տիկնանց վարժարանը (Ռենսի), Ս. Մեսրոպ (Ալֆորվիլ) և Թարգմանչաց (Իսի լե Մուլինո) ամենօրյա վարժարանները: ԶԲԸՄ-ի, ԶՄԸՄ-ի, Թեքեյան, Համազգային մշակութային միությունների, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Փարիզի մասնաճյուղերը, Ֆրանսահայ մշակութային միությունը, Ֆրանսահայ երիտասարդական միությունը, «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը, ԶԲԸՄ «Ալեք Մանուկյան» մշակութային կենտրոնը, հայագիտական հիմնարկներ: Կան մշակույթի տներ, գրախանութներ, պատկերասրահներ: Շոշափելի գործունեություն են ծավալում թատերական-գեղարվեստական խմբերը՝ «Դիմակ», «Կիսանի», «Նարեկ Դուրյան» թատերախմբերը, «Սիփան-Կոմիտաս» երգչախումբը, «Նաիրի», «Նավասարդ», «Սասուն», «Շուշի» (մանկական) պարախմբերը, «Քատրա» երաժշտական միությունը: 1950-ական թթ. գործում է Հայ դեկորատիվ արվեստի թանգարանը: Փարիզահայ արվեստագետներից շատերը ելույթներ են ունեցել Երևանի բեմերում ու համերգասրահներում (Շ. Ազնավուր, Ռաֆֆի Պետրոսյան, Լ. Դուրյան), կազմակերպել անհատական ցուցահանդեսներ (Գառզու, Ա. Պերպերյան, Ռ. Ժերանյան և ուրիշներ): Փարիզում կազմակերպվել են հայկական ցուցահանդեսներ՝ «Հայկական արվեստը Ռիարտուից մինչև մեր օրերը» (1970, Հայ դեկորատիվ արվեստի թանգարան), «Մարտիրոս Սարյան» (1982), «Հայկական Փարիզը» (1990), «Կիլիկիայի թագավորությունը» (1993), «Հայաստանը Արևմուտքի և Արևելքի միջև» (1996, Ազգային գրադարան) ևն:

Փարիզի Պեր լա Շեզ գերեզմանատանը ամփոփված են Փարիզի

հայ հոգևոր առաջնորդների աճյունները: Այնտեղ էր թաղված նաև զորավար Անդրանիկը, որի աճյունը 2000-ի փետրվարի 18-ին տեղափոխվել է Հայաստան (ամփոփվել Եռաբլուրում): Մահարձանը Պեր լա Շեզում պահպանվել է որպես հուշարձան:



Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար Ալֆորվիլում

Փարիզի հայաբնակ արվարձաններ

Ալֆորվիլում բնակվում է շուրջ 10 հզ. հայ: 1930-ին կառուցվել է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին (ճարտարապետ՝ Արմեն Հակոբյան), որին կից գործում է Ս. Մեսրոպ ամենօրյա վարժարանը: 1969-ին ստեղծվել է Հայ մշակույթի տունը, որտեղ գործում են բազմաթիվ խմբակներ, կազմակերպվում գիտաժողովներ, ցուցահանդեսներ, ներկայացումներ: Քաղաքի հրապարակներից մեկը կոչվում է Աշտարակի հրապարակ, կան նաև Ս. Մանուկյանի խմբի, Կոմիտասի անունը կրող փողոցներ, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան: Ալֆորվիլում է գտնվում «Ռադիո Արմենիի» շրջանային կայանը: Քույրացած է ՀՀ Աշտարակ քաղաքի հետ:


Աոնուվիլ լե Գոնեսում 1924-ին կառուցվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ կաթոլիկ եկեղեցին, որն ունի իր ծխական խորհուրդը, դպրոց: Գործում է Ս. Խաչ կաթոլիկ միությունը (ունի երկսեռ երգչախումբ): 1931-ր Արմենակ

Համբարձումյանի բարերարությամբ կառուցվել է Վարազա Ս. Խաչ առաքելական եկեղեցին (ճարտ. Արմեն Հակոբյան): Հայերն ունեն իրենց հավաքատեղին: 1932 - ից գործում է շաբաթօրյա վարժարան: Քաղաքում կանգնեցված է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան:

Բանյոյում բնակվում է շուրջ 2 հզ. հայ: Գործում են Ֆրանսահայ Կապույտ խաչի, Ֆրանսահայ մշակութային միության տեղական մասնաճյուղերը, «Հայ ճամփա» կազմակերպությունը: Կա հայ մտավորականների դամբարան (կառուցվել է 1957 ին), որտեղ թաղված են գրողներ Արշակ Չոպանյանը, Արամ Անտոնյանը, Լևոն Բաշալյանը, Շահան Պերպերյանը, նկարիչ Էդգար Շահինը և ուրիշներ: Քույրացած է ՀՀ Վանաձոր քաղաքի հետ:

Իսի լե Մուլինոյում բնակվում է շուրջ 5 հզ. հայ: Գործում են Մարիամ Աստվածածին եկեղեցին (կառուցվել է 1973-ին Նուրիան Ֆրենկյանի բարերարությամբ), հայ մշակութային տունը (1971-ից), ՀՀԴ Նոր սերունդ երիտասարդական միության, Ֆրանսահայ Կապույտ խաչի, Ֆրանսահայ երիտասարդական միության, Ֆրանսահայ մշակութային միության տեղական մասնաճյուղերը, հայ մարմնամարզական ընկերու-

Առնոսի լե Գոնեսի Վարազա Ս. Խաչ եկեղեցին



թյունը: Հայ բողոքականները (շուրջ 600) ունեն իրենց եկեղեցին: 1982-ին կառուցվել է հուշարձան նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: 1996 - ին բացվել է Թարգմանչաց ամենօրյա վարժարանը: Քույրացած է ՀՀ Էջմիածին քաղաքի հետ:

Կլամարում հաստատված առաջին հայը Խաչիկ Դամլամյանն է: 1922-ից բնակվելով Կլամարում նա շուտով բարձրակարգ բժշկի համբավ է վայելել տեղացիների շրջանում: Ավելի քան հիսուն տարի աշխատել է իր հիմնած կլինիկայում: Կլամարում դոկտոր Խ. Դամլամյանի անունով կոչվել է զբոսայգի:

Քաղաքի կենտրոնական մասում կա հրապարակ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Շավիլում գործում են Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (1957-ից), Փրանսահայ Կապույտ խաչի տեղական մասնաճյուղը, «Ֆրանսիա-Հայաստան - Արցախ» ընկերությունը, «Էներգիա Հայաստանին» կազմակերպությունը (1993-ից), շաբաթօրյա վարժարան:

Վիլժյուիֆում գործում է «Ֆրանսիա -Հայաստան» ընկերակցությունը: 1995 - ին Կոմիտասի մահվան 60-ամյակի կապակցությամբ, Ֆրանսահայ մշակութային միության և Վիլժյուիֆի «Ֆրանսիա - Հայաստան» ընկերակցության նախաձեռնությամբ մեծ երգահանի կիսանդրին տեղադրվել է քաղաքի հիվանդանոցի բակում (քանդակագործ՝ Ա. Եղիազարյան):

Լիոնում հաստատված առաջին հայը պոլսեցի Ռաֆայել Արամ Տեր-Չաքարյանն էր, որը 1877-ին հիմնել է մետաքսե գործվածքեղենի գործարան: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Լիոնում բնակվել են սակավաթիվ հայեր: Պատերազմի ավարտից հետո, ֆրանսիական և հունական կառավարությունների միջև կայացած իրամաձայնությամբ, Սալոնիկում ապաստանած տասնյակ հայ զինվորներ փոխադրվել են Ֆ., որոնցից 17-ը հաստատվել է Լիոնում: 1923-ին լիոնահայության թիվը հասել է 60-ի: 1923 - 24-ին գաղութը ստվարացել է, երբ

այստեղ են ապաստանել Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից տեղահանված բազմաթիվ հայեր:



Իսի լե Մուլինոյի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին

Նրանց մեծ մասը բանվորություն է արել մեքենաշինական, մետաղագործական, վագոնաշինական, ներկարարական գործարաններում: Ոմանք հաջողության են հասել գործվածքեղենի, սննդի արտադրության, ինչպես նաև առևտրի, շինարարության բնագավառներում (Տիար Սրմաքեշյան, Խաչիկյան եղբայրներ, Կ. Հակոբյան, Ճ. Պահատուրյան, Ն. Բուլուկյան և ուրիշներ): 1924-ին Լիոնում բնակվում էր մոտ 500 հայ: Գաղութի կազմավորման առաջին տարիներին Ստեփան Կարապետ Օղլուի նախաձեռնությամբ ստեղծվել է Ազգային միություն, որը ճանաչվել է ֆրանսիական կառավարության կողմից և կազմակերպել համայնքի կյանքը: Միության վարչությունը (նախագահներ են եղել Սերովբե Փափազյանը, Ալեքսանդր Կյուլպենկյանը, Անդրանիկ Օպոզյանը, Ճիբրայիլ Պահատուրյանը, Նապոլեոն Բուլուկյանը, Հրանտ Թադևոսյանը, 1996-ից Ռոպեր Տոնիկյան, պատվավոր նախագահ՝ Սեպուհ Սարյան) վարձակալել է ընդարձակ հողամաս հայ ընտանիքների համար, կառուցել մատուռ (1936- ին օծվել է Ս. Աստվածածին անունով), որին կից գործում է մեկօրյա Հայկազյան վարժարանը (1936-ից): 1920-ական թթ. Լիոնում կազմակերպվել են հայրենակցական, բարեգործական, մշակութային միություններ՝ «Մասիս» մշակութային և բարեսիրական միությունը, Տիկնանց Կարմիր խաչը, Կապույտ խաչը, Աֆիոնի,



Խարբերողի, Բալուի, Յաճընի հայրենակցական միությունները, Դատենի Փերչենճ գյուղի ուսումնական ընկերակցությունը, Մարաշի, Սեբաստիայի, Ջմյուռնիայի, Սերձավոր Արևելքի որբերի ընկերակցությունը, Նալլու խանի, Պոլուի և Շրջակայից երկսեռ երիտասարդաց միությունը, Մալաթիայի կրթասիրացը: Գործել են ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները: 1929-ին կարիքավոր ընտանիքներին օգնելու նպատակով կազմվել է աղքատախնամ մարմինը (նախագահ՝ Անանիա վրդ. Յաբելյան): Մինչև 1939-ը գործել է ՀԿԿ-ի Լիոնի մասնաճյուղը, 1928-ից՝ ՀԲԸՄ-ի, հետագայում՝ նաև Ֆրանսահայ մշակութային միության Լիոնի մասնաճյուղերը: 1928-ին ստեղծվել է Կրթական մարմինը, որի նախաձեռնությամբ ֆրանսիական դպրոցներում դասավանդվել է հայոց լեզու և պատմություն: 1932-ին Ազգային միության գլխավորությամբ, Հայ մայրերի միության օժանդակությամբ Լիոնում գործել են հինգ մեկօրյա մանկապարտեզներ, կազմակերպվել հայերենի գիշերային դասընթացներ:

Լիոնի հայերը մասնակցել են ֆաշիզմի դեմ ծավալված ֆրանսիական ժողովրդի ազատագրական պայքարին (1939-45): Լիոնում էր Հայ ազգային ճակատի կենտրոնատեղին: Շրջանի ղեկավարներն էին Սիրակ Բաղդասարյանը, Մելքոն Գեղանին, Վահրիճ Կեռքչյանը, Նապոլեոն Բուլուկյանը, Աբո ու Յերմոնե Աբոյանները և ուրիշներ: Քաղաքի ազատագրության համար մղված մարտերին մասնակցել է ավելի քան 500 հայ:

1954-ին եկեղեցաշեն հանձնախմբի նախաձեռնությամբ (նախագահ՝ Կարպիս ճնկտրյան), Շինարար տիկնանց հանձնախմբի (նախագահ՝ Մ. Չազրյան) և Հայաստանյայց եկեղեցու երիտասարդական միության գործակցությամբ, Կարապետ Հակոբյանի նյութական օժանդակությամբ Լիոնում կառուցվել է Ս. Հակոբ եկեղեցին (օծվել է 1963-ին):

Լիոնում կան նաև հայ կաթոլիկ


և ավետարանական համայնքներ: 1977-ին կազմակերպվել է Լիոնահայ տիկնանց միությունը, որը կազմակերպում է դասախոսություններ, մշակութային միջոցառումներ, նյութապես օգնում կարիքավոր հայրենակիցներին, ունի իր մատենադարանը (կրում է Սերովբե արք. Մանուկյանի անունը): Համայնքում գործում են նաև Հայ դատի պաշտպանության կոմիտեն, «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը, «Նապոլեոն և Լիա Բուլուկյան» հիմնադրամը, «Լիոն-Երևան» համագործակցական ընկերությունը, Մարգարյան-Փափազյան ամենօրյա վարժարանը, «Կոմիտաս» երգչախումբը, «Սպիտակ» գործիքային համույթը (1989-ից): Լիոնի համալսարանում կազմակերպվել են հայերենի դասընթացներ: Քաղաքի փողոցներից մեկը կոչվում է Հայաստան: Գործում է հայկական ռադիոժամ:

Լիոնում լույս են տեսել հայերեն (նաև ֆրանսերեն) մի շարք պարբերականներ, որոնք տպագրվել են «Եփրատ» տպարանում: Դրանցից են՝ «Լիոնահայ ուղեցույց-տարեցույց» (1931), «Շարժում» (1932), «Հայ մայրերու տարեցույց» (1933), «Շարժում» (1934), «Ակոս» (1936-1937), «Աքլոր» (1936-37), «Նորաշեն» (1936), «Հայ երիտասարդ» (1943-44), «Լույս» (1963-65), «Մորենի» (1976-79), «Ս. Հակոբ» (1982-90) ևն: Ներկայումս Հայ դատի պաշտպանության կոմիտեն հրատարակում է «Ֆրանսարմենի» ամսագիրը, հայ ավետարանական համայնքը «Բ ա ն բ ե ռ» կրոնական ամսաթերթը:

Լիոնում և շրջակայքում (Ռոն - Ալպյան շրջան) բնակվում է շուրջ 100 հզ. հայ:

Լիոնի շրջան Գրենոբլում հայերը բնակություն են հաստատել 1920-ական թթ.: Ներկայումս ք ա ղ ա ք ու մ

բնակվում է շուրջ 2 հզ. հայ՝ գործարարներ, ձեռնարկատերեր, արհեստավորներ: Համայնքը ղեկավարում է Ազգային միությունը (նախագահ՝ Խաչատուր Անտոնյան): 1977 - ին ժ. Մարանճյանի նախաձեռնությամբ



Մարսելի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Սրբոց բարձանչաց եկեղեցին

հիմնվել է Հայկական ակումբը (գործել է գեղանկարիչ Գառզուի հովանավորությամբ): Հայերի հասարակական - քաղաքական, մշակութային կյանքը կազմակերպում են ՀՀԴ տեղական կազմակերպությունը (1928-ից), Հայ մշակույթի տունը (ունի թատերախումբ, պարախումբ, լարային գործիքների համույթ, լեզբիի խմբակ, հրատարակում է «Ազադ նագազին» եռամսյա պատկերազարդ հանդեսը, կազմակերպում հայերենի դասընթացներ), ՀԲԸՄ,

Լիոնի Ս. Հակոբ եկեղեցին





ՀՀԴ- Նոր սերունդ երիտասարդական միության, Ֆրանսահայ Կապույտ խաչի, Հայ նախկին ռազմիկների միության Գրեմբոլի մասնաճյուղերը, 1990-ից Հայաստանի հետ տնտեսական և մշակութային համագործակցության կազմակերպությունը: Քաղաքի փողոցներից մեկը կոչվում է Հայաստան: 1997 – ի ապրիլին, Հայոց ցեղասպանության 82-րդ տարեդարձի նախօրեին, Գրեմբոլում բացվել է տեղի հայ համայնքի պատմությունը ներկայացնող ցուցահանդես:

Դեսինում բնակվում է շուրջ 2,5 հզ. հայ: Գործում են Ս. Աստվածածին եկեղեցին (կառուցվել է 1946 - ին), ազգային կուսակցությունների տեղական կազմակերպություններ, Տարոն-Տուրուբերանի, Խարբերդի, Վասպուրականի, Սեբաստիայի հայրենակցական միությունների ՀԲԸՄ-ի, Ֆրանսահայ Կապույտ խաչի, Ֆրանսահայ երիտասարդական միության, Հայ նախկին ռազմիկների միության (1947-ից) մասնաճյուղերը, շաբաթօրյա վարժարաններ, Դեսինի ընդհանուր հայկական միությունը (ուճի ֆուտբոլի թիմ): 1932-ին ՀՀԴ նախաձեռնությամբ կառուցվել է Հայ մշակույթի տունը, որտեղ գործում են Հայկական ուսումնասիրության, վավերագրության և տեղեկատվության կենտրոնը (1982-ից), դպրոց, գրադարան: Հայ բողոքականներն ունեն եկեղեցի, շաբաթօրյա վարժարան, կազմակերպում են երիտասարդական ճամբարներ: Դեսինում է գտնվում «Ուղիո Արմենի» շրջանային կայանը: Հայոց ցեղասպանության 50-րդ տարեդարձի առթիվ հայկական եկեղեցուն կից փողոցը անվանվել է Ապրիլի 24, 1915:

Շարվին և Պոնտ դը Շերիյ քաղաքներում հայերը հաստատվել են 1918-20-ական թթ.: Նրանց մեծ մասը գաղթել է Սեբաստիայից, Մարաշից, Մալաթիայից, Բուրսայից, Խարբերդից: 1926-ին հաչիկ Ղարիբյանի, Բյուզանդ Պրթկըճյանի, Նշան Դարբինյանի նախաձեռնությամբ ստեղծվել է

Ազգային միությունը, որը կազմակերպում է համայնքի կյանքը: 1980-ին Պահատուրյան ընտանիքի նյութական օժանդակությամբ այստեղ կառուցվել է Ս. Նշան եկեղեցին (ճարտարապետ Պիեռ Մումճյան), որն ունի իր վարչական խորհուրդը: Գործում են Հայ մշակույթի տունը և համայնքի կյանքին առնչվող տարբեր հանձնաժողովներ (կրօնական, մշակութային ևն): Շարվինում կա Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի փողոց, որտեղ կանգնեցված է հուշարձան:

Ռոման և Բուր դը Պեաժ քաղաքներում ապրում է շուրջ 1000 հայ: Գործում է Ս. Նիկողայոս եկեղեցին: 1965-ին ստեղծվել է Ռոման և Բուր դը Պեաժ քաղաքների «Բարեկամության խորհուրդը» (հովանավորում է հայերենի դասընթացները): 1988-ին հայ գործարարներ Ստեփան Կելյանի և Ալեն Մանուկյանի նյութական օժանդակությամբ կառուցվել է «Սևան» մշակութային կենտրոնը (ճարտարապետ՝ Ժան-Հակոբ Քեփենեկյան), որտեղ գործում է շաբաթօրյա դպրոց: Ռոմանում հայտնի անուն է կոնսերվատորիայի տնօրեն, կոմպոզիտոր, գործիքային համույթի ղեկավար Ալեքսանդր Սիրանոսյանը: Նա «Սերենադ» երիտասարդական նվագախմբի ստեղծողն ու հովանավորն է Երևանում: Ա. Սիրանոսյանը բազմիցս ելույթներ է ունեցել Երևանում:

Սեն Շամոնում բնակվում է շուրջ 1000 հայ: 1950-ական թթ. ժան Գրիգորյանի և Մ. Այանյանի նախաձեռնությամբ ստեղծվել է «Սեն Շամոնի հայկական համայնք» միությունը: Գործում են ՀՀԴ տեղական կազմակերպությունը, ՀԲԸՄ-ի, Հայ դատի պաշտպանության կոմիտեի մասնաճյուղերը, Ս. Ներսես Շնորհալի կաթոլիկ եկեղեցին, 1985-ից՝ Հայ մշակույթի կենտրոնը (նախագահ՝ Օդիլ Գիզիրյան, 1996): Քաղաքում կանգնեցված է խաչքար:

Սենտ էտիենում հայերը հաստատվել են 1922 - 26-ին. գաղթել են Խարբերդից, Տարոնից: Ներկայումս քաղաքում բնակվում է շուրջ 250 հայ ընտանիք:

Համայնքի կյանքը կազմակերպելու նպատակով 1920-ական թթ. կեսին ստեղծվել է Ազգային միությունը: 1981-ին Սիրարփի Թովմասյանի նյութական օժանդակությամբ կառուցվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Գործում են ՀՀԴ տեղական կազմակերպությունը, Հայ դատի պաշտպանության կոմիտեի, ՀԲԸՄ-ի, ՀՀԴ-Նոր սերունդ երիտասարդական միության, Հայ սփյուռքի հետազոտության կենտրոնի մասնաճյուղերը, Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միությունը: Կա համայնքային կենտրոն, որին կից շաբաթօրյա վարժարան: 1988-ից քաղաքի հրապարակներից մեկը կոչվում է Հայաստան, որտեղ կանգնեցված է խաչքար-հուշարձան:

Վիենում հայերը հաստատվել են 1920-ական թթ.: Ներկայումս քաղաքում բնակվում է շուրջ 2,5 հզ. հայ: Համայնքը ղեկավարում է ծխական խորհուրդը: 1980-ական թթ. կառուցվել է Հայ մշակույթի տունը: Գործում են հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները, ՀԲԸՄ-ի, ՀՍԸՄ-ի, ՀՄՄ-ի, Ֆրանսահայ Կապույտ խաչի մասնաճյուղերը, Խարբերդի, Մալաթիայի, Տարոն-Տուրուբերանի, Վանի, Մարաշի հայրենակցական միությունները, հայկական երկսեռ երգչախումբը (ղեկավար՝ Դովհանես Պերպերյան), «Գորիս» պարախումբը (1991- ից): Կապույտ խաչի (1929-ից) և ՀԲԸՄ-ի (1971-ից) հովանավորությամբ գործում են մեկօրյա վարժարաններ: Կա հուշարձան՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Քույրացած է ՀՀ Գորիս քաղաքի հետ:

Վիլեորբանում բնակվում է շուրջ 3,5 հզ. հայ: 1988-ին քաղաքապետի հայկական հարցերով խորհրդական ժան Գրիգորյանի նախաձեռնությամբ բացվել է Հայ մշակույթի տունը (գործում է ՀՀԴ հովանավորությամբ): Նախկին քաղաքապետ Շառլ Էդնյուն մեծ ջանքեր է գործադրել Եվրախորհրդարանում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համար: Քաղաքի փողոցներից մեկը կոչվում է Հայաստան: Քույրացած

է ՀՀ Արմյան քաղաքի հետ:

Մարսելում բնակություն հաստատած առաջին հայերը վաճառականներ էին:

XVI դ., երբ Մարսելը դարձել է միջազգային առևտրի խոշոր կենտրոն, այստեղ լայն գործունեություն են ծավալել նաև հայ վաճառականները: Սակայն տեղացի վաճառականների դրոմամբ ֆրանսիական իշխանությունները սահմանափակել, ապա արգելել են հայ վաճառականների մուտքը Ֆ., ինչը տևել է մինչև 1660-ը, երբ արտոնվել են Ջենովայի և Լիվոռնոյի հայերին փոխադրվել Մարսել: 1669-ին քաղաքը հռչակվել է ազատ նավահանգիստ, և բոլոր ազգությունների վաճառականներին արտոնվել է առևտրի ու նաև ֆրանսիական քաղաքացիության իրավունք: Այս պատեհությունից օգտվել են նաև հայերը. Արևելյան Հայաստանից այստեղ են փոխադրվել բրդի, շերամի առևտրով զբաղվողներ: 1672-ին Ոսկան Երևանցին Մարսելում հիմնել է տպարան, որտեղ տպագրվել են հայերեն գրքեր: 1885-ին Արմենական կուսակցության հիմնադիրներից Սկրտիչ Փորթուգալյանը հաստատվել է Մարսելում, որտեղ հրատարակել է «Արմենիա» ամսագիրը (1885 - 1923): 1888-ին ստեղծվել է Հայոց հայրենասիրական միություն ազգային-ազատագրական կազմակերպությունը (հիմնադիր Մ. Փորթուգալյան):

Մարսելի հայ համայնքը ստվարացել է Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Մեծ եղեռնից փրկված արևմտահայ գաղթականների մի մասը բնակություն է հաստատել քաղաքում և նրա շրջակայքում: Ստեղծվել է Հայ գաղթականների օգնության կոմիտե (նախագահ՝ Տիգրան Միրզայանց), որն զբաղվել է հայերի տեղավորման գործով: 1920-ական թթ. կազմակերպվել են Վասպուրականի, Չարսամձազի, Խարբերդի (Եփրատ միություն), Սեբաստիայի, Բարձր Հայքի, Քղիի, Արաբկիրի, Ուրֆայի հայրենակցական միությունները: 1924-ին Սկրտիչ Փափազյանի, Կարո Ուշաքյանի,

Վազգեն Անդրեասյանի, Սկրտիչ Մալումյանի նախաձեռնությամբ հիմնվել է ՀՍԸՄ-ի Մարսելի մասնաճյուղը: Ստեղծվել են նաև հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները, ՀՕԿ-ի մասնաճյուղը (գործել է մինչև 1935-ը): 1927-ին Մարսելը դարձել է Հարավային Ֆ-ի թեմի առաջնորդանիստ կենտրոն: Թեմի առաջնորդ՝ Գրիգորիս եպս. Պալաքյանի (1879-1934) նախաձեռնությամբ Մարսելի շրջանում կազմակերպվել են հայ համայնքներ, կառուցվել են եկեղեցիներ, ընտրվել է Ազգային կենտրոնական վարչությունը, որի խնդիրն էր մանուկների հայեցի դաստիարակությունը, եկեղեցիների պահպանությունն ու նրանց կից դպրոցների հսկողությունը: 1928-ին ազգային բարերար Վահան



Սեն Ժերոմի Ս. Սահակ - Ս. Մեսրոպ եկեղեցին

Խորասանճյանի նյաթական օժանդակությամբ կառուցվել է Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Սրբոց թարգմանչաց եկեղեցին: Նույն թվականին հիմնվել է ՀՍԸՄ-ի Մարսելի մասնաճյուղը, որին կից գործում են Երկսեռ երիտասարդաց ընկերակցությունը (1935-ից) և Տիկնանց օժանդակ հանձնախումբը (1955-ից):

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Մարսելի հայերը մասնակցել են պարտիզանական կռիվներին և քաղաքի ազատագրմանը: 1942 - 45-ին

գործել է Հայ ազգային ճակատի տեղական կազմակերպությունը (ղեկավարներ՝ Կարապետ Քյուրեջյան, Փայլակ Գարագաշ, Սմբատ Ջորավար, Ավետիս Ֆահրադյան): Մարսելի և նրա արվարձանների ազատագրության համար մղված մարտերում մեծ դեր է խաղացել նաև «Հայ երիտասարդ կոմունիստներ» մարտական ջոկատը:

1976-ին կազմակերպվել է Մարսելի հայ մշակույթի տունը, որին կից գործում են Հայ Կապույտ խաչի և ՀՀԴ - Նոր սերունդ երիտասարդական միության տեղական կազմակերպությունները: Ներկայումս (2003) Մարսելում բնակվում է շուրջ 80 հզ. հայ (արհեստավորներ, բանվորներ, մտավորականներ): Քաղաքում և նրա արվարձաններում գործում են Ա. Մահակ - Ս. Մեսրոպ, Ս. թարգմանչաց մայր եկեղեցին, ինչպես նաև Ս. Հակոբ, Ս. Կարապետ, Ս. Գևորգ. Ս. Թադեոս - Ս. Բարդուղիմեոս, Ս. Աստվածածին, Ս. Գրիգոր Լուսավորչ, (որոնց կից՝ մեկօրյա դպրոցներ), հայ նախկին ռազմիկների միության (1931-ից), Համազգային մշակութային միության (1934-ից), Ֆրանսահայ երիտասարդական միության (ԺԱՓ), Ֆրանսահայ մշակութային միության, «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպության, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Մարսելի մասնաճյուղերը, Հայ ուսանողական կենտրոնը, «Ազատագրություն» կազմակերպությունը, Համազգային լիցեյը, Անարատ հղիության քույրերի վարժարանը: 1981-ին էքս-ան-Պրովանսի համալսարանում պրոֆեսոր Ռոպեր Տեր-Մերկերյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է հայոց լեզվի ամբիոն: Մարսելի քաղաքապետարանի անդամներ են Կ. Հովսեփյանը, Ժ. Քերքերյանը, Ժ. Ժերպերյանը: 1994-ին երկարատև համագործակցության համաձայնագիր է կնքվել Մարսելի և Երևանի միջև:

Երաժիշտ Վարդան Սարգսյանը (Կոմիտասի սաներից) 1931-39-ին Մարսելում իր հիմնած «Արմենիա» երգչախումբը (տվել է

համերգներ, կատարել Կոմիտասի ստեղծագործությունները): 1977 – ին խաչիկ Յըլմազյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Սահակ - Մեսրոպ» երգչախումբը: Գործում են նաև «Գարուն» մանկապատանեկան երգչախումբը, «Մասիս» գործիքային համույթը, «Արամ Խաչատրյան» երաժշտական հիմնադրամը:

Լույս են տեսել «Խթան» (1915-1935), «Հայ սիրտ» (1925-38), «Հաճն» (1929-40), «Արեգ» (1932-33), «Ժողովուրդի ծայն» (1935-38), «Նոր կյանք» (1944-47), «Արծազանք Մարսելի» (1945-59), «Հայ ժիրանի գոտի» (1991-93) պարբերականները: Հայ բողոքականները հրատարակում են «Բանբեր» կրոնական ամսաթերթը (1925-ից):

1920-30-ական թթ. հայերը սկսել են հաստատվել նաև Մարսելի արվարձաններում: Նրանց մեծ մասը գաղթել է Կիլիկիայից, Կ. Պոլսից, Խարբերդից, Սեբաստիայից, Բրուսայից, Ուրֆայից, Վանից:

Մարսելի շրջան

Բոմոնիի հայ համայնքը շրջանի լավ կազմակերպված համայնքներից է: 1950-ական թթ. քաղաքում բնակվել է շուրջ 4 հզ. հայ: Համայնքային կյանքը կազմակերպում է Կրոնական ընկերակցությունը, կա նաև թաղային խորհուրդ: Գործում են Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (կառուցվել է

խաչի (կազմակերպում է հայերենի դասընթացներ), ՀՀԴ - Նոր սերունդ երիտասարդական միության տեղական մասնաճյուղերը, «Շանթ» գրական-գեղարվեստական միությունը:

Սեն ժերոմում հայերը հաստատվել են 1925-ին: Նորեկները բանվորություն են արել քաղաքի արևելյան գորգի գործարանում: 1950-ական թթ. հայերի (շուրջ 2 հզ.) 80%-ն արդեն սեփականատեր էր (ուներին սեփական տներ, խանութներ): 1933-ին կառուցվել է Ս. Սահակ – Ս. Մեսրոպ եկեղեցին (կից գործում է շաբաթօրյա դպրոց): Համայնքն ունի Կրոնական ընկերակցություն, ՀՀԴ հովանու տակ գործող մի քանի կազմակերպությունների տեղական մասնաճյուղեր:

Սեն Լուում 1929-ին Գրիգորիս եպս. Պալաքյանի նախաձեռնությամբ և համրության նյութական օժանդակությամբ կառուցվել է Ս. Գևորգ եկեղեցին (ունի մանկապարտեզ): 1935-ին կազմակերպվել է Ֆրանսահայ Կապույտ խաչի տեղական մասնաճյուղը: Գործում է թաղական խորհուրդը:

Սենտ Անտուան - Կամպանյո Ֆրենում գործում են Ս. Թադեոս - Ս.Բարդուղիմեոս եկեղեցին (ունի երկսեռ երգչախումբ, կազմակերպում է հայերենի դասընթացներ), թաղական խորհուրդը: Արվարձանին կից բլուրը կոչվում է «Արսլանբեկ»՝ այնտեղ բնակություն հաստատած արսլանբեկցիների անունով:

Նիս (Նիցցա) քաղաքում բնակվում է շուրջ 2 հզ. հայ: XIX դ. վերջին - XX դ. սկզբին, հետևելով եվրոպացի մեծահարուստների օրինակին, որոնք ծնան ամիսներն անցկացնում էին Նիսում, մի քանի հայ մեծահարուստներ (Ասպետ Վահան Խորասանճյան, ջուղայեցի վաճառական՝ Նահապետյան, պոլսահայ Սիմոն Կայսրյան և ուրիշներ) ևս այստեղ կառուցել են շքեղ առանձնատներ: Այդ շրջանում Նիս են այցելել Վ. Թեքեյանը, Ա. Չոպանյանը, Սիամանթոն, Կոմիտասը: 1923-ին ջուղայեցի Նահապետյանը, որը Հնդկաստանում ձեռք էր բերել մեծ կարողություն և զբաղվում էր բազմահարկ շենքերի

շինությամբ ու վաճառքով, իր մոտ աշխատելու նպատակով Մարսելից Նիս է տեղափոխել մի խումբ հայ գաղթականների (մեծ մասամբ՝ Բրուսայի մոտակա



Վալանի Ս. Սահակ եկեղեցին

Չենկիլեր գյուղից): Նորեկները հաստատվել են քաղաքի մի անկյունում՝ Մատլենի հովտում, կառուցել են հայկական փոքրիկ բնակատեղի, հիմնել ամենօրյա դպրոց և ֆուտբոլի թիմ (գոյատևում է ցայսօր): Նույն թաղամասում 1928 - ին Գրիգորիս եպս. Պալաքյանի նախաձեռնությամբ և բելգիահայ բարերար Տիգրան Չամբիրթյանի նյութական օժանդակությամբ կառուցվել է Ս. Աստվածածին մատուռը (այժմ՝ եկեղեցի): Դպրոցը տեղավորվել է եկեղեցուն և գործել մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը (1939): 1945-ից այստեղ կազմակերպվել են մեկօրյա դասընթացներ: 1953- ին եկեղեցուն կից կառուցվել է երիցատուն Գալուստ Կյուլպենկյանի բարերարությամբ: Նորեկ համագյուղացիները, գտնելով ավելի լավ վարձատրվող աշխատանքներ, դարձել են արհեստավոր, մանր առևտրական և հասնելով նյութական բարեկեցիկ վիճակի սկսել են բնակվել քաղաքի կենտրոնական թաղամասերում: Ներկայումս եկեղեցական թաղում (կրում է Սիտե Արմենին՝ Հայկական թաղամաս



Բոմոնի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

է 1930-ին՝ Գրիգորիս եպս. Պալաքյանի նախաձեռնությամբ և համայնքի նվիրատվություններով), Ֆրանսահայ Կապույտ

անունը, փողոցները կոչվում են Արարատ, Հայաստան, Երևան, Սևան) ապրում է մեկ տասնյակ հայ ընտանիք: Հայ համայնքի կենտրոնը սակայն Ս. Աստվածածին եկեղեցին է, որին կից 1988-ին Պարսամյան ընտանիքի և քաղաքապետարանի նյութական օժանդակությամբ կառուցվել է Պարսամյան համալիրը: Այստեղ գործում է Պարսամյան ամենօրյա վարժարանը: Նիսի և շրջակայքի հայ գաղութը վերջին 15-20 տարիների ընթացքում բազմացել և բարգավաճել է շնորհիվ Կ. Պոլսից, Լիբանանից և Իրանից եկած բարեկեցիկ ընտանիքների, որոնք նոր լիցք են հաղորդել համայնքային կյանքին: Նիսահայ համայնքն ընդգրկում է իտալական սահմանից մինչև Սեն Ռաֆայել երկարող միջերկրածովյան գոտին, որտեղ ներկայումս գործում են հայկական հաստատություններ ու միություններ. Նիսի և շրջակայքի Հայոց կրոնական ընկերակցությունը հիմնվել է 1951-ին՝ ազգային բարերար Տիգրան Չամբիրյանի ջանքերով: Զբաղվում է եկեղեցու, երիցատան, Պարսամյան ամենօրյա վարժարանի մատակարարման գործերով: Նիսահայ տիկնանց միությունը կազմակերպվել է 1974-ին՝ հայ մշակույթն ու ավանդույթները պահպանելու նպատակով: Հովանավորում է Պարսամյան համալիրում գործող մեկօրյա դպրոցը (ունի հինգ դասարան, դասավանդվում են հայոց լեզու, պատմություն, հայ մշակույթ և կրոն), զբաղվում է նաև կարիքավոր հայրենակիցների խնդիրներով:

Հայ մշակութային ակումբը հիմնվել է 1972-ին: Կազմակերպում է դասախոսություններ և մշակութային միջոցառումներ, ունի գրական, գեղարվեստական, երաժշտական, պարային, թատերական բաժիններ: Սևան մշակութային ակումբը կազմակերպվել է 1982-ին, Կանն քաղաքում՝ ֆրանսիական հասարակությանը հայ մշակույթին և արվեստին ծանոթացնելու նպատակով: Հայ մարզական միությունը հիմնվել է 1926-ին: Նախապես գործել է որպես ֆուտբոլի թիմ: Ունի ըն-

դարձակ հավաքատեղի, որը տրամադրել է քաղաքապետարանը:

Համայնքում գործում են նաև ՀԲԸՄ-ի, ՀՍԸՄ-ի, Ֆրանսահայ Կապույտ խաչի, Հայ դատի պաշտպանության կոմիտեի, Հայ նախկին ոստիկանների միության մասնաճյուղերը, Հայ արվեստի և գրականության բարեկամների միությունը, «Սայաթ-Նովա» երգչախումբը, լույս է տեսնում «Բարև» հանդեսը: 1988 - 1994-ին գործել է «SOS Արմենի» կազմակերպության տեղական մասնաճյուղը, որի ջանքերով Նիսի հիվանդանոցներում բուժվել են մի խումբ երեխաներ: 1990-ին Նիսում հանդիսավոր պայմաններում բացվել է մարզադաշտ, որին տրվել է «Սպիտակ» անվանումը:

Վալանսոււմ հայերը սկսել են հաստատվել 1920-22-ից: Նրանց մեծ մասը գաղթել է Խարբերդից, Մալաթիայից, ավելի ուշ՝ Բրուսայից: Հիմնականում բանվորություն են արել Վալանսի մետաղագործական, սննդի, տեքստիլ, կաշվի, թղթի գործարաններում: Հայերի ազգային կյանքը կազմակերպելու նպատակով 1927-ին հիմնվել է Վալանսի ազգային միությունը: 1951-ին Վալանսում կառուցվել է մատուռ, որը 1953-ին օծվել է որպես եկեղեցի՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ անունով: Վալանսահայերը մասնակցել են երկրորդ համաշխարհային պատերազմին՝ ֆրանսիական բանակի շարքերում, և Դիմադրության շարժմանը:

Ներկայումս Վալանսում բնակվում է շուրջ 8 հզ. հայ: Գործում են ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները, ՀԲԸՄ-ի (1934-ից), Հայ Կարմիր խաչի, Հայ Կապույտ խաչի, Մալաթիա կրթասիրական ընկերության, Ֆրանսահայ մշակութային միության, Ֆրանսահայ երիտասարդական միության տեղական մասնաճյուղերը, Մալաթիայի հայրենակցական միությունը, Հայ մշակույթի տունը, Համազգային մշակութային միության «Մուշեղ Իշխան» Վալանսի մասնաճյուղը (ճանաչված է ֆրանսիական կառավարության կողմից, ունի ռադիոժամ «Համազգային ձայն»), Ազ-

գային կրոնական ընկերակցությունը. ինչպես նաև այլ հասարակական, հայրենասիրական կազմակերպություններ (1992-ին Դրոմ դեպարտամենտի իշխանությունները գրանցել են հայկական 28 կազմակերպություն): 1969-ին Վալանսի նորաբաց թաղամասերից մեկը կոչվել է «Երևան՝ մայրաքաղաք Հայաստանի»: 1988-ին ազգային բարերար Վարուժան Պոզաճյանի նյութական օժանդակությամբ կառուցվել է Ս. Սահակ եկեղեցին: Վալանսի և շրջակայքի հոգևոր հովիվ Նարեկ քին. Վարդանյանի ղեկավարությամբ գործում է մեկօրյա Դավիթյան վարդարանը (1996-ին աշակերտների թիվը՝ 130): 1988-ի Սպիտակի երկրաշարժից և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից (1991) հետո հիմնվել են «Սփյուռք - Հայաստան» (մարդասիրական), «Հայաստան երկիր» (օգնություն է կազմակերպում Արցախին), «Արմենիա» (մշակութային) միությունները: Համայնքն ունի ֆուտբոլի թիմ: Վալանսի քաղաքապետ Պատրիկ Լաբոնի երկու խորհրդականները հայ են՝ ժոզեֆ Դեմիջյան և Ժանուել Կոչկարյան: Քույրացած է ՀՀ Իջևան քաղաքի հետ:



Աֆորվիլի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին

МІНІСТЕРСТВО ОСВІТИ І НАУКИ
УКРАЇНИ ДЕРЖАВНИЙ КОМІТЕТ
УКРАЇНИ У СПРАВАХ
НАЦІОНАЛЬНОСТЕЙ ТА МІГРАЦІЇ

НАКАЗ

06.10.2004 N 778/49

Зареєстровано в Міністерстві
юстиції України
21 жовтня 2004 р.
за N 1352/9951

Про затвердження Типового положення
про культурно-освітній центр
національних меншин України

Відповідно до статей 1 і 12 Закону України «Про позашкільну освіту» (1841-14), статті 4 Закону України «Про загальну середню освіту» (651-14), статті 6 Закону України «Про національні меншини в Україні» (2494-12), постанови Кабінету Міністрів України від 6 травня 2001 року N 433 (433-2001-п) «Про затвердження переліку типів позашкільних навчальних закладів і Положення про позашкільний навчальний заклад» та з метою як найповнішого задоволення потреб національних меншин в Україні в галузі навчання, виховання, загальнокультурної підготовки НАКАЗУЄМО:

Затвердити Типове положення про культурно-освітній центр національних меншин України (додається).

Голова Державного комітету України у
справах національностей та міграції

Г. Г. Москаль

ЗАТВЕРДЖЕНО

Наказ Міністерства освіти
і науки України,
Державного комітету України
у справах національностей
та міграції
06.10.2004 N 778/49

Зареєстровано в Міністерстві
юстиції України
21 жовтня 2004 р.
за N 1352/9951

ТИПОВЕ ПОЛОЖЕННЯ

про культурно-освітній центр національних
меншин України

Загальна частина

1. Культурно-освітній центр національних меншин України (далі - Центр) - позашкільний навчальний заклад, що сприяє задоволенню культурно - освітніх потреб національних меншин України.

2. Центру у своїй діяльності керується Конституцією України (254к/96-ВР), законами України, нормативно-правовими актами Міністерства освіти і науки України, Державного комітету України у справах національностей та міграції, іншими законодавчими актами, актами органів управління ос-

вітою, прийнятими в межах їх повноважень, Положенням про позашкільний навчальний заклад, затвердженим постановою Кабінету Міністрів України від 6 травня 2001 року N 433 (433-2001-п), а також цим Положенням і власним статутом.

3. Основними завданнями Центру є:

- виховання громадянина України;
- вивчення рідної мови, літератури, історії, географії, народознавства, писемної творчості;
- ознайомлення з культурною спадщиною, національними традиціями, звичаями, культурою та побутом свого народу;
- виховання патріотизму і любові до України, поваги до народних звичаїв, традицій;
- національних цінностей націй і народів.

*Організаційно-правові засади діяльності
Центру*

4. Засновниками Центру можуть бути:

- місцеві органи виконавчої влади;
- органи місцевого самоврядування;
- підприємства, установи, організації України та їх об'єднання незалежно від форми власності та підпорядкування;
- національно-культурні товариства, інші громадські організації національних меншин;
- громадяни України.

5. Центри комунальної форми власності створюються місцевими органами виконавчої влади або органами місцевого самоврядування з урахуванням соціально-економічних, національних, культурно-освітніх, освітньо-мовних потреб населення за наявності необхідної навчально методичної та матеріально-технічної бази, педагогічних кадрів та дотримання санітарно-гігієнічних норм, правил і стандартів.

6. Рішення про створення Центру приватної форми власності приймається власником за наявності необхідної навчально-методичної та матеріально-технічної бази, педагогічних кадрів та дотримання санітарно-гігієнічних норм, правил і стандартів.

7. Центр може відкриватися при громадських об'єднаннях національних меншин, у позашкільних, загальноосвітніх, дошкільних, професійно-технічних навчальних закладах різних типів і форм власності за наявності двох і більше різновікових класів, входить до складу навчально-виховних комплексів, навчально-виховних об'єднань з дошкільними, загальноосвітніми та іншими навчальними закладами.

8. Центр може бути юридичною особою і діяти на підставі статуту, що затверджується засновником (власником) та реєструється відповідним місцевим органом виконавчої влади або місцевого самоврядування, мати самостійний баланс, рахунки в установах банку, печатку, штамп та бланк установленого зразка.

Центри комунальної форми власності, які не є юридичною особою, користуються кутовим штампом, печаткою, матеріально-технічною базою загальноосвітнього чи позашкільного навчального закладу, при яких вони створені.

9. Ліквідація та реорганізація Центру

здійснюються відповідно до законодавства.

*Організація навчально-виховного
процесу*

10. Навчально-виховний процес у Центрі здійснюється за навчальними планами та програмами на засадах педагогічно обгрунтованого вибору засобів і методів навчання та виховання учнів.

11. Навчальний план розробляється керівником Центру, навчальні програми - педагогічними (науковими) працівниками і затверджуються Міністерством освіти і науки Автономної Республіки Крим, управліннями освіти і науки обласних, Київської та Севастопольської міських державних адміністрацій.

12. Зміст освіти в Центрі може мати такі компоненти:

- рідна мова та література як невід'ємні складові національної культури;
- історія рідного краю;
- історія держави та права;
- основи національної культури.

Відповідно до законодавства навчально-виховний процес у Центрі має світський характер.

13. Режим роботи, структура навчального року встановлюються Центром з дотриманням Державних санітарних правил і норм. Канікули визначаються з урахуванням національних свят і традицій.

14. Заняття в Центрі проводяться, як правило, два рази на тиждень або відповідно до потреб і запитів учнів, слухачів. Тривалість одного заняття з урахуванням віку учнів (слухачів) - до 45 хвилин.

15. Зарахування вихованців, учнів і слухачів проводиться без обмеження їх віку на добровільних засадах згідно з особистою заявою (для неповнолітніх заявою батьків або осіб, які їх замінюють).

16. Наводнюваність класів (груп) у Центрі встановлюється засновником, але не повинна перевищувати 20 учнів (слухачів).

17. Центр може надавати додаткові освітні послуги відповідно до законодавства України та порядку, затвердженого Кабінетом Міністрів України.

18. Система оцінювання навчальних досягнень учнів устанавлюється Центром самостійно за погодженням із засновником.

19. Випускникам Центрів видаються відповідні документи, передбачені для позашкільних навчальних закладів.

Управління Центром

20. Керівництво Центром здійснює його директор, який призначається: у комунальних закладах - відповідним місцевим органом управління освітою, у приватних - засновником. Обов'язки з керівництва Центром можуть бути покладені з відповідною оплатою на керівника загальноосвітнього, позашкільного або дошкільного навчального закладу, при якому цей Центр створений.

21. Заступники директора, педагогічні та інші працівники призначаються на посади і звільняються з посад відповідно до законодавства України про працю, Закону України

«Про позашкільну освіту» (1841-14).

22. Колегіальним органом управління Центру є педагогічна рада, яку очолює директор закладу.

23. Органами громадського самоврядування є загальні збори працівників і учнів (слухачів) та рада, що діє в період між зборами. При Центрі можуть створюватись учнівський комітет, методичні об'єднання тощо.

24. Методичну допомогу та контроль за діяльністю Центру здійснюють засновник, відповідні органи управління освітою.

25. Основною формою державного контролю за діяльністю Центру, який є юридичною особою, є його атестація, що проводиться не рідше одного разу на 10 років у порядку, установленому Міністерством освіти і науки України.

Фінансово-господарська діяльність

26. Фінансово-господарська діяльність Центру проводиться відповідно до Законів України «Про бюджетну систему України» (512-12), «Про власність» (697-12), «Про місцеве самоврядування в Україні» (280/97-ВР), «Про

позашкільну освіту» (1841-14) та інших нормативно-правових актів, статуту Центру.

27. Фінансування Центрів комунальної форми власності здійснюється за рахунок коштів відповідних бюджетів, приватної власності - засновників (власників), а також за рахунок додаткових джерел фінансування, не заборонених законодавством. Обсяги фінансування видів діяльності за рахунок бюджету встановлюються місцевими органами управління освітою.

28. Витрата коштів на утримання Центру здійснюється за кошторисом, затвердженим засновником і використовується для провадження діяльності, передбаченої його статутом.

29. Штатний розпис Центру затверджується його засновником.

30. Оплата праці керівників, педагогічних та інших працівників Центру здійснюється за угодою (контрактом) відповідно до законодавства.

31. Центри користуються пільгами, установленими законодавством для закладів системи освіти.

32. Ведення діловодства, бухгалтерського

обліку та звітності в Центрі здійснюється у порядку, визначеному законодавством.

Міжнародне співробітництво Центру

33. Центр має право проводити міжнародний учнівський та педагогічний обмін у рамках освітніх програм, проектів, брати участь у міжнародних заходах.

34. Центр має приїзд укладати угоди про співробітництво, установлювати прямі зв'язки з органами управління світою, навчальними закладами, науковими установами, підприємствами, організаціями, громадськими об'єднаннями інших країн у встановленому законодавством порядку.

Перший заступник директора департаменту загальної середньої та дошкільної освіти
Я.П.Корнієнко

Начальник управління у справах національностей
Т.І.Пилипенко

Выписка из решения Методического объединения учителей армянского языка и культуры Нетрадиционной армянской школы Крымского армянского общества от 26.08.2005г.

ЦЕЛИ И ЗАДАЧИ НЕТРАДИЦИОННОЙ АРМЯНСКОЙ ШКОЛЫ на 2005-2006 учебный год

Цель: Создание условий для удовлетворения образовательных потребностей армянского населения АРК в изучении родного языка, истории и культуры.

Совершенствование структуры НАШ (Нетрадиционная армянская школа) на основе интеграции групп, сформированных в общеобразовательных учебных заведениях, и воскресных армянских школ; программно-методическое, информационное и финансовое обеспечение их деятельности. Создание условий для становления первой армянской школы в АРК.

Задачи:

1. Заключение договора с Министерством образования и науки (МОиН) АРК о совместной деятельности.

2. Получение грифа МОиН

АРК и МОиН Украины на учебную «Программу по армянскому языку для общеобразовательных школ I ступени с русским (украинским) языком обучения» и апробация ее в республике.

3. Формирование банка данных об учащихся-армянах в учебных заведениях АРК.

4. Продолжение работы по созданию групп изучения армянского языка в общеобразовательных школах Крыма: г.Симферополь, г.Севастополь, г. Евпатория, г.Ялте, Красногвардейском р-не и др. местах компактного проживания армян.

5. Расширение в НАШ преподавания истории армянского народа и народов Крыма, занятий народного танца и музыкальной культуры.

6. Продолжение формирования банка данных о педагогических кадрах КАО, в первую очередь, в филологов-армянистов и историков.

7. Решение вопроса о финансировании в государственных учебных заведениях Крыма (за счет местного бюджета) тарифицированных преподавателей армянского языка.

8. Организация методических семинаров для педагогов НАШ по новой программе: «Интерактивные методики преподавания в разновозрастных и разноуровневых группах».

9. Организация курсов переподготовки и повышения квалификации

для педагогов НАШ.

10. Продолжение комплектования НАШ учебными пособиями и материалами, детской литературой и наглядностью.

11. Оборудование кабинетов армянского языка в СОШ №3 (г. Симферополь), СОШ № 8 (г. Евпатория) за счет средств Рескомнаца.

12. Осуществить реорганизацию светских воскресных школ в Культурно-образовательные центры согласно Типового положения о культурно-образовательных центрах национальных меньшинств Украины от 21.10.04.

13. Обеспечение лучших учащихся НАШей школы путевками в летние оздоровительные лагеря, создание летней оздоровительной площадки для детей КАО.

14. Обобщение опыта работы НАШ, представление его в Рескомнаце, Министерствах образования и науки АРК и Украины, Городских управлениях образования АРК.

15. Расширение информационной поддержки НАШ, не имеющей аналогов в армянских общинах Украины, через СМИ КАО.

**Заместитель председателя
КАО по образованию,
директор Нетрадиционной
армянской школы
Т.А.Салистая- Григорян**

Я - АРМЯНИН

Я стар, как Арарат. Я - древний армянин.
И башмаки мои от вод потопа влажны.
Здесь Ной топтал снега сияющих вершин,
И Бела грозного сразил мой меч отважный.
И камень, с незапамятных времен
Проросший мхом, я обтесал упрямо,
Чтоб он, моею кровью освящен,
Лег в основание языческого храма.
В долине Арарата на заре
Я, отложив свою кирку и молот,
Огонь затеплил в халдском алтаре...
Я молод был тогда, и Арарат был молод.
Но каждый лепесток в долине стал багрян, -
Все, что от века было возвращено в ней,
Всходило только на крови сыновней.
Здесь все холмы скрывают прах армян.
Испытанным щитом встречал я натиск вражий.
Стократ я ранен был и побеждал стократ.
Я - армянин. Я стар, как Арарат,
И голову держу я выше горных кряжей.
Мне каждый новый век страданья приносил.
Кто сыновей моих по всей земле развеял?
Кто Арарат дождем кровавым оросил,

Под корень подкосил ростки, что я взлелеял?
Я жил, дышал средь выжженных полей,
На щелбне пустырей, на черном пепле,
Но кровь свою я превратил в елей
И заново светильники затеплил.
Из множества мечей сковал я лемеха,
Сынам своим вернул отцовскую опеку,
Их скорбь я воплотил в дыхание стиха,
Подобно новому Григорию Нареку.
Я - армянин. Как Арарат, я стар...
И Арарат бы сокрушила сила
Моих страданий. Первый свой удар
Мне наносил любой поднявшийся Аттила.
Я привыкал к резне, веками жил в плену,
Я был, как сирота, в борьбе за жизнь упорен.
На вспаханную новую целину
Упала горсть моих тысячелетних зерен.
Благословен мой род, его величье свято,
Изгнанником я был - и Родину обрел.
Я - древний армянин, ровесник Арарата,
Чьей седины крылом касается орел.

Геворг Эмин

Точка зрения авторов публикуемых материалов может не совпадать с позицией редакции.
Ответственность за точность сообщаемых фактов несут авторы.
Рукописи не возвращаются и не рецензируются.

Главный редактор:
Габриелян Олег

Редколлегия:
Акопян Мери, Акопян Нарине, Варданян Лусине, Горенкин Валерий,
Каракулян Аргашес, Лукашевич Людмила, Хачаян Карина, Цатурян Мария.

Адрес: 95001, АРК, Симферополь, ул. Ленина, 9.
Телефон: (0652) 27-89-15 **Факс:** (0652) 27-63-37.

Дизайнеры: Габриелян Тигран, Акопян Нарине **Фотограф:** Саник Анатолий

Регистрационное свидетельство: КМ № 150 от 01.11.94г.
Заказ № Тираж 1000 экз.

Набор, верстка, тиражирование Крымского армянского общества.



www.kao.iatp.org.ua